ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

0010 քաղ. Երևան, Վ. Սարգսյան 5, հեռ. /ֆաքս/ 511-601

№ 18-07/ք-13

«26» 11 2013թ.

«Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակ» հասարակական կազմակերպության նախագահ պարոն

Ա. Սաքունցին

Ձեր 2013թ. հոկտեմբերի 14-ի Ձեր դիմումը ՀՀ հատուկ քննչական ծառայությունում քննարկվել է:

Դիմումի կապակցությամբ հայտնում եմ, որ քրեական դատավարության օրենսգրքով Դուք նախաքննական մարմնին ցուցումներ տալու կամ քննությանը միջամտելու լիազորություններով օժտված չեք, առավել ևս՝ քրեական դատավարության օրենսգրքով նախատեսված չէ դիմումատուին քննչական գործողությունների վերաբերյալ տեղեկություններ հայտնելու օրենսդրական ընթացակարգ:

Մինչ օրս քրեական գործով ձեռնարկվել ու ձեռնարկվում են անհրաժեշտ բոլոր քննչական գործողությունները, օպերատիվ-որոնողական միջոցառումները՝ զանգվածային անկարգությունների ընթացքում կատարված բոլոր հանցագործությունների դեպքերը, առավելապես՝ տասն անձանց մահվան հանգամանքները, դրանց ականատես անձանց պարզելու, մեղավոր անձանց ի հայտ բերելու ուղղությամբ:

Միաժամանակ, տեղեկացնում եմ, որ ՀՀ հատուկ քննչական ծառայությունը բազմիցս հայտարարություններ է տարածել՝ զանգվածային անկարգությունների ընթացքում կատարված հանցագործությունների, առավելապես՝ տասն անձանց մահվան հանգամանքների վերաբերյալ տեղեկատվություն ունեցող անձանց իրավապահ մարմիններին ներկայանալու հորդորով, այլ ոչ թե՝ նախաքննական մարմնին ուղղորդելու կամ քննչական գործողություններ կատարելու առաջարկություններ ներկայացնելու խնդրանքով:

Եթե Դուք ունեք տեղեկություններ զանգվածային անկարգությունների ընթացքում կատարված հանցագործությունների, առավելապես՝ տասն անձանց մահվան հանգամանքների վերաբերյալ, առաջարկում ենք ներկայանալ ՀՀ հատուկ քննչական ծառայություն և նախաքննական մարմնին հայտնել դրանք:

ՀՀ հատուկ քննչական ծառայության հատկապես կարևոր գործերի քննիչ՝

Ա. Ս. Գրիգորյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՀԱՏՈՒԿ ՔՆՆՉԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

ԵԼՔ

«26» 11 2013 թ.